

ԱԿԱԴ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՈՂՋՈՒՅՑՆԻ ԽՈՍՔՍ

Ամեն տարի նոյեմբերի 29-ի հոբելյանական պանծալի այս օրը մեր սիրտը լցվում է ուրախությամբ, հրճվանքով ու պատկառանքով: Ուրախությամբ, որովհետև մի տարի ևս անցկացրինք և արժանի եղանք տեսնելու հոբելյանական շքեղ հանդիսաղրությունները. հրճվանքով, որովհետև ո՛ր սիրտը կարող է չհրճվել մեր երկրի օրից օր, ժամե ժամ առաջադիմությունը՝ աչքով տեսնելով ու ձեռքով շոշափելով. պատկառանքով, որովհետև մինչդեռ մյուս պետությունները մեծ անունով օժտված, բայց հոգեկան փոքրությամբ տոգորված, գիշեր-ցերեկ մտածում են տկար ազգերին ջնջելու, նրանց ազգային ազատությունը խլելու և նրանց ստրկության շղթաները ամրացնելու, այստեղ ընդհակառակը տիրում է ազգերի եղբայրական սերը՝ հավասարության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված, իսկ կռիվը ուղղված է բնության դեմ, պայքար ավելի շատ քաղելու նրանից այն՝ ինչ որ կարող էր տալ և պիտի տա, պայքար երաշտի ու սովի դեմ, որպեսզի չհամարձակվեն մտնել մեր երկիրը, որի համար էլ Ստալինյան հոյակապ պլանով, մեր մեծածավալ պետության մի ծայրից մինչև մյուս ծայրը սկսվել, գործադրվում ու տարածվում է անտառապատման ընդհանուր անծայրածիր ծրագիրը:

Բայց գիտության նվիրված մարդկանց համար, այդ պատկառանքը վերածվում է պաշտամունքի, ի տես և ի լուր այն պատմական հոդվածի, որ այս տարի, մեր մեծահանճար առաջնորդ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ մարգարտաշարեց «Правда» թերթի էջերում:

Պրոֆ. Մառի կեղծ մարքսիստական վարդապետությունը լեզվաբանության մեջ կասեցրել էր մտածող մտքերը, փակել էր ասպարեզը գիտունների առաջ և ամեն ինչ բացատրում էր 4 երևակայական էլեմենտներով: Մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԸ իր հոյակապ աշխատությամբ փշրեց кофейная ступа-յով սրճի բաժակը, հիմք դրավ մարքսիստական լեզվաբանության, այսինքն ճշմարիտ գիտության և լայն բաց արեց աշխատանքի դռները գիտության նվիրված բոլոր ուսումնականների համար:

Պարզ և խորը գիտական իր աշխատությունը՝ «ՄԱՐՔՍԻԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ», անբաժան ընկեր պիտի լինի բոլորիս՝ ուսանողներին և ուսուցիչներին, գիտուններին, պրոֆեսորներին և ակադեմիկոսներին: Այսուհետև բոլոր գիտական աշխատությունները նույն ասպարեզում, իբրև լուսասփյուռ փարոսից, պիտի լուսավորվեն, ներշնչվեն ու առաջնորդվեն նրանով: